

166
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Կ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ ԲԱԺՆԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1

Պրոլետարներ բոլոր յեկրների միացե՛ք,

ԴԱՇՏԱՅԻՆ ՄԿՆԵՐԸ

ՅԵՎ

ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԸՍՏ ՌՈՍՍԻԿՈՎԻ

Կազմեց

Կ. Կ. ՄԵԼԻԲ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Խմբագրությունը
Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1924 թ.

Պոլիգրաֆ տրեստի I-ին տպարան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳՈՏ ԲԱԺՆԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք,

ԴԱՇՏԱՅԻՆ ՄԿՆԵՐԸ

ՅԵՎ

ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԸ


ԸՍՏ ՌՈՍՍԻԿՈՎԻ

Կազմեց

Կ. Կ. ՄԵԼԻԲ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Խմբագրությունը

Խ. ՅԵՐԻՅՅԱՆԻ




ՅԵՐԵՎԱՆ—1924 թ.

Պոլիգրաֆ, տրեստի I-ին տպարան

15356

177965

A II 2349



№ 1898

ԴԱԾՏԱՅԻՆ ՄԿՆԵՐԸ

ՅԵՎ

ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ամենքին հայտնի յե, թե մկները մեզանում ինչ
փաստներ են տալիս թե հացաբույսերին, թե բանջարեղենե-
րին և թե պտղատու տղիներին, մինչև անգամ անտառ-
ներին: Նրանց յերևալը մեծ պաշտոնաս ե. նրանք քայ-
քայում են ազգաբնակության տնտեսությունը և նեղ
կացության մեջ դնում նրան: Շատ վաղուց այդ չարիքի
առաջն առնելու համար գիտնականները ուսումնասիրու-
թյան առարկա են դարձրել կրծողների և մասնավորապես
մկների կյանքը և աշխատել են գտնել նրանց դեմ կըռ-
վելու միջոցները:

Մեր նպատակն ե համառոտ կերպով ծանոթացնել
ընթերցողին մկների կյանքի, նրանց հասցրած փաստի և
նրանց դեմ կռվելու միջոցների հետ:

1. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՒԿԸ

Այդ մկան մորթը մեջքի կողմից զանազան գույն ու-
նի, սկսած մկնագորշ գույնից մինչև մուգ-սևա-մոխրա-
գույն գյունը, դեղնագույն գորշ փալլով: Փորը և վտանե-
րի գույնը՝ բաց-մոխրագույն ե: Տարբեր յերկրներում
այդ մկները տարբեր գույն ունեն: Գլուխը կոլոր ե,
դունչը սուր, ականջները փոքրիկ ու կոլոր և աչքերը

դուրս պրծած: Պոչը կազմում է մարմնի և գլխի ամբողջ յերկարության մոտավորապես $\frac{1}{3}$ մասը (տեսնելար 1.): Ականջները մորթու մազերից հազիվ են դուրս գալիս: Կտրիչ ատամները գեղին են: Առաջին վոտների վրա կան չորս մատներ, իսկ հետին վոտների վրա հինգ, հետին վոտների տակը ծածկված է բրդով: Մարմնի մեծությունը մոտ 3 ու կես դույմ է:



Սովորական մուկը աշխույժ ու կայտառ փոքրիկ կենդանի յէ: Նա լավ վազում է, լավ ել լողում, հողը վարպետությամբ է փորում և այդ աշխատանքը մյուս մկներից ավելի արագ է կատարում: Ծառերի վրա քիչ է բարձրանում և այն ել վոչ համարձակ: Շատ հաշտ բնավորություն ունի: Ինչպես և մկների մյուս տեսակները, Նկար 1 սովորական մուկները, շատ վախկոտ է: Տեսողությունը, լսողությունը և հոտառությունը շատ զարգացած է: Նրա բնորոշ հատկություններից գլխավոր՝ շատակերությունն է: Նրա սիրած բնակավայրը—ազատ դաշտերն ու մարգագետիններն են, շատ սակավ պատահում է անտառամեջերի բաց տեղերում կամ թալաներում: Վոչ միայն չոր մշակված տեղերը, այլև խոնավ ու ցածրադիր ճահճային տեղերը ևս ծառայում են նրան բնակավայր:

Նա բազմանում է մեծ խմբերով ցանքահաշտերում

մարգագետիններում, արոտատեղիներում, խոտահարք-
ներում, այգիներում ու բանջարանոցներում, մինչև անգամ
գյուղերի հրասարակներում: Վոչ ավել քան մի վոտնա-
չափ խորության վրա նա շինում է իր բույնը, վորը
կոչոր ձև ունի և պատած է լինում խոտով, կամ կրծած
ծղոտով և յերբեմն ել մամռով: Այդ բույնը մի գլխավոր
յելք ունի, վորին միանում են մինչև վեց կողմնակի յեր-
կար ու կարճ, ուղիղ և ծուռ անցքեր, վորոնցից մի մա-
սը գետնի յերես է դուրս պալիս: Բնից մի յերկու կող-
մնակի անցքեր տանում են պահեստները, վորոնք կենա-
լու բնից թե մեծ են և թե քիչ բարձր տեղ են շինված:

Այնանը սովորական մկները մասամբ մնում են ի-
րենց ամառային բնակավայրերում, մասամբ ել փոխա-
դրվում աշնանացանքսերը, հացաբույսերի տեղերը, հա-
ցի պահեստները, խոտատեղերը, ծղոտի թուփակները,
տները, շտեմարանները, գոմերը և ուրիշ շենքեր:

Այն մկները, վորոնք մնում են ամառվա բնակա-
վայրերում մեծ պաշար են պատրաստում հացահատիկ-
ներից և ուրիշ սերմերից, և պահում իրենց պահեստնե-
րում: Յեթե յենթադրենք, վոր մի քառակուսի սաժեն
տեղից մուկը կարող է հավաքել 1 ֆունտ հատիկներ,
վոր ապացուցված է փորձով, ապա մի դեպքում անհիշ
կատացվի 60 փուղ: Դիտված է նաև, վոր մկները մե-
զանում և ուրիշ տեղերում ձմեռը քնափության չնն լեն-
թարկվում, մինչև անգամ ձյունի մեջ իրենց համար անց-
քեր են բանում և բներ շինում:

Սովորական մուկը, նայելով տարվա ժամանակին,
անհրվում է ամեն տեսակ բուսական նյութերով՝ հացա-
հատիկներով, զանազան խոտերի սերմերով, ինչպես և
խոտերի ու բանջարանոցների, հացաբույսերի նոր ծլած
ցողուններով ու արմատներով, թարմ խոտով, կսրնզանի

արմատներով ու տերևներով, պտուղներով և այլ: Մեծ քանակությամբ փշացնում է հաճարը, պտուղները, բանջարանոցների ընդեղենը, արմատապտուղները՝ կարտոֆիլը և այլն: Սովորական մուկը իր ցեղի մկների շարքում ամենաշատակերն է: Աշնանացանքսին նա մեծ ավե-



Նկար 2. Մկների՝ արտին տված վնասը:
 րածուծյուններ է պատճառում, բուրրովին ուտելով ծրլած ցանքսերը (տես նկար 2): Գարունը բացվելուց ույնպես վնասում է գարնան ցանքսերին: Բայց յերբ արտերը սկսում են հասնել, տված վնասներն ուրիշ կերպարանք են ընդունում: Նրանք կտրում են ծղոտները կամ ինչպես ասում են խուզում են տակից, վայր ձգում, մի քանի մասերի բաժանում, կտրում են հասկերը, և բները տանելով՝ խնամքով դարձում են պահեստում: Հնձի ժամանակ հետևում են հնձվորներին, թափված հատիկները ուտում են իսկ հասկերը հավաքում:

Սովորական մուկը տարվա ընթացքում բազմանում է 4-6 անգամ և ծնում ամեն անգամ 4-8 մեկ ու կուր ձագեր:

Տաք դաշտավայրերում, ինչպես որին. Արարատյան դաշտում եղբ ծնում է 6-8 անգամ, դարունքից սկսած: Նոր ծնած եղերը մի ամիս ու կեսից ընդունակ են լինում նույնպես ծնելու և առանձին ընտանիք կազմելու. այդպիսով տարվա 8 ամսվա ընթացքում մի գույգ մկներից առաջ են գալիս ավելի քան 5000 մկներ. 2-3 տարվա ընթացքում, բարեյաջող պայմաններում այնպես են բազմանում, վոր բռնում են հարյուրավոր վերստ տարածություն և այնպես ծակոտում գետինը, որ վոտ դնելու տեղ չի մնում:

Այս Մկների բազմանալու բարեյաջող պայմանները որոշ աստիճանի տաքությունն է և չափավոր խոնավությունը: Դիտված է, վոր սովորական մուկը շատ բազմանալուց քոչում է ուրիշ տեղ, անցնելով սարեր ու գետեր, առաջացնելով մեծ ավերածություններ:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՈՒԿԸ

Հասարակական է կոչվում այս մուկը, վորովհետև նա, ինչպես կռեսները ներքև, վարում է հասարակական կյանք:

Հասարակական մուկը ծածկված է բավականին խիտ ու փափուկ մազերով, վորի գույնը շատ փոփոխական է, հաճախ վերևի մասը բաց-դեղնա-գորշ գույն ունի իսկ ներքևի կողմը՝ մոխրագույն ճերմակ գույն, դեղին փայլով: Վոտները դեղնավուն ճերմակ են. պոչը 3, 4 անգամ կարճ է մարմնի լերկարությունից (զլուխն էլ հաշված), այնքան կարճ, վոր նրան չե կարելի շփոթել սովորական մկան հետ. ծածկված է կարճ մազերով: Ականջները մազերից դենը չեն անցնում, նրանք գրեթե անմազ են, ու-

կանջների կողերը ծածկված են
կարճ մաղերով: Բեխերը սպիտակ
են. Չափահասների մարմնի յեր-
կայնությունը դնչից մինչև պոչի
ծայրը 3 ու կես 4 դույմ է:

Հասարակական մուկը (տես նկ.
3) շատ նման է սովորական մը-
կան թե մեծությամբ, թե գույ-
նով և թե ուրիշ շատ հատկու-
թյուններով, բայց նրանից տար-
բերվում է իր հասարակական
բնույթով և միշտ նրան կարելի
յե գտնել իր բնակավայրում մեծ
խմբերով:

Համեմատաբար հաստ մարմի-
նը և կարճ վոտները նրան ծան-
րաշարժ են դարձնում, բայց նա
լավ վազում է և բներ փորում.
Իսկ պատերի յերեսով վատ է
բարձրանում: Հավ լողում է և
գետից անցնելուց բերանում ծը-
ղատ կամ հասկ է բռնում, վոր նկար 3. հասրակ, մուկ
ոգնում է լողալու ժամանակ:

Հասարակական մուկը բնակվում է կավահող և ա-
վազահող դաշտերում, արոտատեղերում ցանքադաշտե-
րում և այգիներում, գետահովիտներում և ցած դաշտա-
վայրերում: Նա փախուստ է տալիս ճահճային տեղերից
և յեղեգնոտներից: Նա պատահում է և խոպան անապատ-
ներում, բայց աղահողերում չի լինում: Անտառներում
բոլորովին չի պատահում, բայց թփուտներից չի փախ-
չում:

Կովկասի լեռնային տեղերում նա ընտրում է գլխա-



վորապես մշակված հողամասերը և նրանց մեջ կամ շուրջը յեղած քարերի տակ իր բուռնը շինում:

Հասարակական ցեղի մկները միշտ խմբերով կամ գաղութներով են ապրում և իրենց ցեղական անունը դրանով բոլորովին արդարացնում: Այդ խմբերը բաղկացած են լինում 25-30 զույգից, իսկ հաջող տարին նրանց թիվը հասնում է՝ 50-60:

Հողի մեջ ապրելով հասարակական մուկը իր բուռնը շինում է մեկ քարրորդ արշին խորության մեջ և չոր խոտ փռում ներսը: Ամեն մի այդպիսի բուռն մի քանի անցքեր է ունենում: Իսկ Լեռնային ու քարքարոտ տեղերում, վորտեղ հնարավորութիւն չկա հողի մեջ բուռն շինելու, քարերի տակն են ընտրում, հողի վերի շերտում անցքեր ու ծակեր բաց անում: Այդ ծակերի բերանի շուրջը ավաղ ու հող է լինում կուտած, բները ունենում են մինչև ութ և ավելի անցքեր:

Հասարակական մուկը ամբողջ տարին միևնույն բնակարանում չէ ապրում: Աշնանը, սովորաբար նա փոխադրվում է արոտատեղերը, վորտեղ ավելի մեծ խորությամբ: Բայց քիչ անցքերով է իր բուռնը շինում: Չմեռվա բներում ապրում են զույգերը (եգը, վորձը) իրենց ընտանիքով: Նա գիշերային կյանք է վարում: Չատ անգամ ցանքսերի մեջ ցերեկն ել գուրս է գալիս բնից, բայց սովորաբար վաղ առավոտյան և արևը թոնելուց, մուկ ժամանակ: Չմեռը պաշար չեն հավաքում, կերակրվում են արմատներով ու խոտերով: Իրենց բնավորության շատ կողմերով սրանք նմանում են սովորական մկանը, սա ևս ագահ է և շատակեր: Անդրկովկասի տափաստաններում, իր գլխավոր բնակավայրում նա ուտում է խոտեղենը, իսկ նույն տեղի յերկրագործական շրջանում անխնա կերպով փչացնում է հացաբույսերի բոլոր ցանքսերը թե հասկ բռնած ու հասած ժամանակը և սեր-

մելուց հետո, ծլած ժամանակը,
նույն կերպով ինչպես և սովորա-
կան մուկն է անում:

Հասարակական մուկը գաղթում,
քոչում և իջ տեղից հետևյալ
պատճառներով՝ յերբ ջուրն կո-
խում ահզը, բացակայում է կերը
և յերևում են համաճառակ հի-
վանդություններ, կաշու և ներ-
քին պարագիտներ:

Տարվա ընթացքում հասարա-
կական մուկը բազմանում է այն-
պես, ինչպես և սովորական մուկը.
այն է յեզը ծնում է տարեկան
4-6 անգամ, տաք տեղերում
7-8 անգամ և այն ել 6 ձագեր
ամեն անգամ:

Հասարակական մուկը բարեհա-
ջող տարիներին չափազանց ու-
ժեղ է բազմանում, նրանք 1903
թվին Մուղանի և Մելի դաշտա-
վայրերում այնպես եյին փորփո-
րել գետինը, վոր ձիով անցնելը
անկարելի էր: Դաշտավայրի ամ-
բողջ բուսականությունը և ցանք-
սերը կերել եյին և սովից ստիպ-
ված հարավից դեպի Հյուսիս ե-
յին քոչել: Ճանապարհին պատա-
հած ցանքսերը խժռել եյին և
այդի-նեը ու բոնջարանոցները
փչացրել:



Նկար 4. Դաշտամուկ

Այս վերջին տարիներին, այն է 1920 թվից մկները մեծ փաստներ են տվել Ալեքսանդրապոլի, Լոռու, Ղարաբաղի, Նոր-Բայազետի, Դիլիջանի, Ջանգեղուրի և Արարատի շրջաններում: Հարյուրավոր դեսյատիններ ավերակ էին դարձրել: Չքավոր գյուղացիներից շատերը մկների բները քանդելով իրենց համար ձմեռվա պաշարը հանել էլին այդ բների պահեստներից:

3. ԴԱՇՏԱՄՈՒԿԸ

Դաշտամուկը (տես. նկ. 4) յերեք գույն ունի, վերևից կարմրագորշ ներքևից ճերմակ, վրաները ճերմակ, մեջքի վրա անցնում է աչքի ընկնող մի սև շերտ, հակատից սկսած մինչև պոչի հիմքը: Եզր ունի 8 ծծեր, պոչը մարմնից կարճ է, նրա յերկարությունը մարմնի 3 չորրորդ մասն է կազմում 120 ողակներով, վերևի մասի մագերը կարմրագորշ, իսկ ներքևին ճերմակավուն է. ալանջները կարճ են գլխի $\frac{1}{3}$ յերկարություն ունին, բթի վրա կռացնելուց աչքերին չեն հասնում: Մարմնի յերկարությունն է $3\frac{1}{4}$ — $3\frac{1}{2}$ գույմ, պոչի յերկարությունն է 3 գույմ:

Դաշտային մուկը ինչպես ցույց է տալիս իր անունը, գլխավորապես մշակված բույսերի թշնամին է ու կարելի յե ճիշտ ասել, վոր նա ապրում է բոլոր պտղաբեր ու մշակված վայրերում և փախուստ է տալիս բուսականությամբ աղքատ անապատներից:

Յերբեմն պատահում է և անտառներում, հաճախ այգիներում բանջարանոցներում ու ծառաստաններում:

Նախ ընտրում է լայնատերև անտառները փշատերևներից և ապրում նրանց մեջ ընկած բաց տեղերում: Մշակված հողերում նա ապրում է հացաբույսի ցանքներում և բանջարանոցներում: Պատահում է հաճախ և տըների մեջ աշնանը:

Կովկասում նա ապրում լեռների մոտ գտնված դաշտավայրերում:

Մենդվում ե բուսական նյութերով, բայց և կենդանական. արտերում նա փչացնում ե հացաբույսերը, անտառներում և այգիներում ծառերի սերմերը, մանավանդ մսալի սերմերի կորիզները, որը շատ հեշտ ե կրծոտում: Կենդանական աշխարհից նա ուտում ե զանազան միջատների վորդներն ու թրթուրները:

Անտառներում ու այգիներում բնակված ժամանակ յերբ պակասում ե կերը, ընկնում ե մատաղ ծառերի վրա և նրանց կեղևը կոծում: Դիտված ե, վոր շատ բազմաանալուց ու կերի պակասության պատճառով այդ մկները իրար ել են ուտում:

Դաշտամուկը թեև հասարակական կյանքով ե ապրում, սակայն ամեն մեկը առանձին բնակարան ունի, վորը փորում ե մի վտանաչափ խորությամբ հողի մեջ:

Բնից այս ու այն կողմը ընկած անցքերը գետնի յերեսը չեն դուրս գալիս:

Աշունը գալուց, դաշտամուկը մեծ մասամբ թողնում ե իր ամառվա բնակարանը և ավելի հարմար տեղ ընտրում գյուղերում, տների մեջ, շտեմարաններում, պահեստներում, բակերում ու գոմերում, խոտի ու հացաբույսերի դեղերի տակ նրանք ձմեռվա համար բների մեջ հատիկների ու սերմեր քիչ պաշար են պահում:

Մենդաբերությունը սկսվում ե մարտ ամսից իսկ շատ տեղերում ավելի շուտ: Դաշտամկները բազմաճանցում են մեծ քանակությամբ և շատ անգամ թողնում իրենց տեղը և տեղափոխվում հեռավոր տեղեր:

Դաշտամուկը արտերի մեջ տեղավորվելով շատ բազմացած ժամանակը փչացնում ե ցանքսերը, գլխավորապես հացաբույսեր: Անտառներին ու այգիներին նա

մեծ փնտա չի տալիս գոնե այդ մասին դեռ դրական ցուց-
մունքներ չկան:

4. ԴԱՇՏԱՅԻՆ ՄԿՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Դաշտային մկները, ինչպես և մկան ցեղի կրծող-
ները գազանների և ամենակեր կենդանիների մեծ մասի
սիրած կերակուրն են: Ցամաքային կենդանիներից չկա
մեկը որ թշնամի չլինի այդ ցեղին, վոմանց համար մրկ-
ները ծառայում են իբրև կեր, Մենք մեջ կրե-
րենք կրծողների թշնամիներից միայն գլխավորները
որոնք փչացնելով մեծ թվով գյուղատնտեսության այդ
կատաղի թշնամիներին, մեծապես ոգնում են մարդուն և
արժանի են նրա ուշադրության, պահպանության և հո-
վանավորության:

Ա. ԳԱՋԱՆՆԵՐԸ

Մարդու մոտիկ աշխատակիցները, դաշտային մկները
փչացնելու մեջ ընտանի կենդանիներից կասողներն են
և շները: Ընտանի կատուն մկների առատ ժամանակը ո-
րական փչացնում է միջին թվով մինչև 20 հատ: Շները
դաշտային մկների կատաղի թշնամիներն են, նրանցից ոչ
մեկը այդ փոքրիկ կենդանիներին բաց չի թողնում և ան-
պատճառ աշխատում է բռնել և նրանց կրծել: Շների
տեսակներ, կան վոր մկներ վորսալու մեջ շատ վարպետ
են, սկնասպան անունն են կրում, մեկ որում 100-ից
ավելի մուկ են սպանում և կեսից ավելին ուտում:

Վայրի կենդանիներից մկների թշնամիներն են շատ
գիշատիչ փոքրիկ գազաներ, վորոնց մեջ մանավանդ հայտ-
նի են աքիսը, առնետը, սամոյրը, կզնաքեսը, ջրաքեսը
վոզնին, և վերջապես վայրի և ընտանի խոզը և ուրիշ շա-
տերը:

Ախար տմեն տեղ և տմենից շատ ե փշացնում
մկներին և ավելի ճարպիկությամբ քան մյուսները, նա
բնությամբ թե արյունարբու ե և թե շատակեր:

Բ. ԹՈՂՈՒՆՆԵՐԸ

Թռչունների դասակարգից մուկ ուտողների մեջ ա-
ռաջիս տեղը բռնում են գիշատիչ թռչունները, մանա-
վանդ գիշերաշինները՝ բուռն, անտառաբուռն (բայդուշը),
բուռն, կույր բայդուշը և ուրիշները, իսկ ցերեկվա թռ-
չուններից, վոր գլխավորապես մկներով են կերակրվում,
հայտնի յեն՝ բրդոտ բազեն, մարգագետինների և անա-
պատի մկնաբազեն: Բուռն, իրենց մուկ փշացնելու գոր-
ծունեության համար փնտրալոր կատներ անում են
տալիս: Այդ թռչունները, մանավանդ կովկասում
գոյություն ունեցող բուռն, մի գիշերում ուտում
են 30-ից ավելի մկներ և այդքան ել կոտորում,
կաշաղակներն ու ագռավները, ինչպես և սարկաները,
ջայլամները, կռունկները, նույնպես ուտում են մկներին:

Դաշտային մկների թշնամիներն են և բոլոր ոճերը:
մանավանդ թունալորները և դեղնափոր մողեսը (խլեզը):
Մկների այդ բնական թշնամիները ահագին փնտս են հասցնում
մկներին և դրանով լերկրագործ ազգաբնակությանը մեծ
ծառայություն անում: Սակայն մեր գյուղատնտեսության
ներկա պայմանների և ժողովրդի անուշադիր և մինչև ան-
գամ թշնամական վերաբերմունքի շնորհիվ դեպի իր այդ
դաշնակիցները, նրանք այն դերը չեն խաղում, ինչ վոր
նրանք կարող եյին խաղալ ուրիշ պայմաններում:

Բայց մկների այդ թշնամիների ուժերից վեր ե նրանց
խաչառ փշացնելը, քանի վոր մկները տարին մի քանի
անգամ են բազմանում, իսկ իր թշնամիները մեծ մտ-
աւած տարին մի անգամ:

Սակայն, թեպետև նրանք չեն կարող իսպառ վոչընչացնել մկներին, բայց և այնպես մեծ ոգնություն կարող են հասցնել յերկրագործին: Դրա համար ել հարկավոր ե ուշադիր լինել դեպի այդ կենդանիները և բարեկամաբար վերաբերվել նրանց:

Այդպիսի ոգտակար կենդանիների և թռչունների հովանավորելը և պահպանելը յերկրագործ ժողովրդի համար մեծ նշանակություն ունի: Նրանք զլիսավորապես դաշտային մկներով և նրանց ցեղակիցներով սննդվելով, դրանով պահպանում են մեր ցանքսերը անխնա փշացնելուց: Այդ ոգտակար կենդանիներից շատերի կյանքի նշանավոր հատկություններն իմանալով և նրանց մեր աջակցությունը ցույց տալով, մենք կարող ենք նրանց մեր ցանած դաշտերի վրա զբաղվել, վորտեղ մկներն են բնակված և դրանով նրանց ոգտակար գործունեությունը ավելի մեծացնել:

Այդ միջոցները հետևյալներն են՝

Գիշատիչ թռչուններին գրավելու համար արտերի մեջ 1 և կեսից մինչև 2 սափեն բարձրությամբ ձողեր են տնկում և նրանց վրայից 1 արշին յերկարությամբ վրան կանգնել համար մի ուրիշ փայտ կպցնում, թառ շինում: Իսկ գիշատիչ փոքրիկ գազանների համար բարից և այլ նյութերից փոքրիկ թումբեր են շինում:

Յերեք կամ չորս այդպիսի ձողերը բավական են 2—3 դեսյատին արտի համար: Այդ ձողերը տնկում են գարնան սկզբին կամ աշնան, յերբ գիշատիչ թռչունները մի տեղից մյուս տեղն են թռչում:

Այդ ձողերը, լավ կլինի, վոր ամբողջ տարին իրենց տեղերում մնան և գարնանն ու աշնանը պնդացնվեն:

Առհասարակ բոլոր գիշատիչ թռչունները շատ հաճությամբ թառ են լինում այդպիսի ձողերի վրա, աչք ածում վորսին և հարձակվելով բռնում: Կուշտ ուտելուց հետո այդ թառերի վրա նստում են նորից, աչք ածում, քնում և զարթնելով՝ նորից սկսում, թե իրենց և թե մարդու շահեկան գործը:

Գիշատիչ փոքրիկ գաղանձներին գրավելու համար քա-
րից կամ կտրատված աղյուսից թմբեր են շինում արտե-
րի կողքերին չհերկված հողամասերում և գլուխը ճվբերով
ծածկում:

Առնետը, աքիսը, վոզնին և ուրիշները մեծ հաճույ-
քով են այդ թմբերի տակ բուն դնում և այնտեղ ապրե-
լով, բազմաթիվ մկներ վորսում:

3. ՄԿՆԵՐԻ ՊԱՐԱՋԻՏՆԵՐԸ ՅԵՎ ԲԱԲՏԵՐԻԱՆԵՐԸ

Դաշտային մկները մեծ չափով կոտորվում են և գա-
նազան հիվանդություններից, վոր առաջանում են թե
բակտերիաների և թե ուրիշ պարազիտների շնորհիվ: Դր-
բանք հանգիստ չեն տալիս մկներին, չեն թողնում քնե-
լու, կանոնավոր կերակրվելու, դրանից նրանց ուժերը
թուլանում են և չեն դիմանում այս ու այն անբարեհա-
ջող պայմաններին և կոտորվում են անթիվ բազմու-
թյամբ:

Մտնավանդ շատ են վոչնչանում մկները իրենց տիֆ
կոչված հիվանդությունից, վորը մկների համար չափա-
զանց վարակիչ և ծանր հիվանդություն է:

5. ՄԿՆԵՐԻ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Դաշտային մկները և նրանց ցեղակիցները փչացնե-
լու համար գործ են ածում հետևյալ միջոցները:

ա. Մեխանական միջոցը, յերբ մկներին բռնում են
այս կամ այն թակարդներով. այս ձևը գործադրում են
գլխավորապես տներում:

բ. Քիմիական միջոցը գործադրվում է դաշտերում
և ուրիշ հողամասերում. դրա համար վերցնում են քու-
նավոր նյութեր, ինչպիսիք են՝ Ծոսփորը, Վկնդեղը ած-
խաթթու բարին, ստրիխնինը և ուրիշներ, վորոնցից գա-
նազան դեղեր և բաղադրություններ են պատրաս-
տում: Այդ բաղադրությունները զգուշությամբ պիտի
գործադրվեն, քանի վոր նրանք կարող են թե մարդկանց
և թե անասուններին վնասել, ինչպես և մկների թշնամի-

ներին, մեզ ոգնական թռչուններին և փոքրիկ գաղաններին:

գ. Բակտերիոլոգիական միջոցը այն է, յերբ մկներին վարակում են մկների տիֆ հիվանդությունով: Հիվանդության բակտիրիաները բազմացնում են առանձին հեղուկի մեջ և հետո խառնում ալյուրի հետ, խմոր դարձնում ու դնում մկների բները: Մկներն ուտում են, հիվանդանում և վարակում ուրիշներին: Բայց վորովհետև մեզ մոտ այդ թույնը պատրաստող չկա և հետո դրա արդյունքը դեռ լավ չի պարզված ուստի այս ձևի մասին մենք այստեղ չենք խոսիլ, այլ կանգ առնենք միմիայն քիմիական միջոցների վրա, վորոնք ամեն տեղ գործնականում տվել են շատ լավ արդյունք:

Դաշտային մկներն թունավորելու գործը հաջող տանելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

Աշխատանքները դեռ չսկսած նախ պետք է հետազոտել այն բոլոր հողամասերը, վորոնք բնակավայր են դարձված մկներին և տեսնել ու վորոշել թե ինչ տարածություն են բռնում, վորքան մոտավորապես մկներ կան այս ու այն հողամասերում, վորպեսզի այդ տվեալների վրա հիմնվելով՝ իմացվի թե ինչ քանակությամբ դեղ է պետք, բանվորական ույժ և այլ բաներ, կուիվ մղելու գործը կազմակերպելու համար:

Մկների փշացնելու հաջող ժամանակը աշնան սկիզբն է կամ վաղ գարնանը:—Գարնանը՝ յերբ դաշտերը հալոցից հետո չորանում են, իսկ աշնանը՝ հացաբույսերը հավաքելուց հետո:

դ. Դաշտային մկների կոտորելու աշխատանքը սկսելուց մի օր առաջ նրանց բները պետք է հողով ծածկել, վորպեսզի մյուս օրը ճարը միայն այն ծակերի մեջ ձգվեն, վորոնք բացված են և իսկապես բներն են: Այն բները վորտեղից մկները հեռացել են ու անբնակ են հետևյալ օրը մնում փակ, իսկ վորտեղ մկները դեռ ապրում են, դրանց բների ծածկած ծակերը նորից մրկները նույն օրը բաց են անում:

Թունավորելը պիտի լինի մկների բնակված տեղի ամբողջ տարածության վրա,

Մկների շատ բազմացած ժամանակ անհրաժեշտ է թունավորել և այն մկներին վորոնք, հացաբույսերի դաշմանի, ծղոտի, խոտի դեղերի մեջն են ապրում, լինեն ներանք դաշտում դրած թե գյուղերում, ագարակներում, բակերում, կալերում ինչպես և փակված շինությանց մեջ, շտեմարաններում ու պահեստներում:

Մկնդեղը, վոր ամենա ուժեղ ճարն է մկների դեմ, պատրաստում են հետևեալ կերպով՝

1. Վերցնում են 100 մասջրին 2 մաս մկնդեղ և 2 մաս սոդա: Կամ մի շիշ (20 ը մի վեդրո) ջրին 2—4 մսխալ մկնդեղ և այդ քան ել սոդա: Մկնդեղը սոդայի հետ հալեցնում են կրակի վրա եռացրած ջրում, դործադրելուց քիչ առաջ:

2. Վերցնում են թխած հաց բոքոն, փնտղի (Տխիլի) մեծությամբ կտրատում լցնում խախալի կամ մի այլ ծակոտ ամանի մեջ կոխում ճարի ամանի մեջ թրջում և իսկույն հանում:

Մի լիտր ճարը (Բորժոմի մեծ շիշը) բավական է մինչև 10 ֆունտ կտրատած հաց թրջելու համար: ճարը դործադրելուց մի որ առաջ ինչպես ասված է մկների բների ծակերը պիտի ծածկել, որ ավելորդ ճար չգործադրվի և աշխատանքը հեշտանա:

Ճարը պատրաստելուց հետո թրջված բոքոնի կըտորները բաժանում են բանվորներին տանապետների միջոցով:

Բանվորները կանգնում են շարքով մեկ մեկուց երեք քայլ հեռու, ձախ ձեռքին ամանի մեջ լցրած թունավորումած բոքոնի կտորտանքը, իսկ աջ ձեռին փոքրիկ փայտիկ, որի միջոցով ամանից ծակերի մեջ են ձգում ճարը և կանոնավոր շարքով մի ուղղությամբ առաջ գնում

մինչև վերջանում ե մկներով բռնված հողամասը: Կե-
սորին և յերեկոներին բանվորները գործից դուրս գալուց
թե ձեռները և թե ամանները պիտի լվանան: Մկնդեղը
ուժեղ թույն է, պետք է զգուշ լինել և թունավորվե-
լու դեպքում անմիջապես կաթ խմել:

Մի բնի մեջ հարկավոր է մի քանի հատ թունավոր
հացի կտորներ գցել:



Մկներն ուտելով թունավորված հացի կտորները մա-
հանում են 24 — 36 ժամում:

Մկների դեմ կռվելու աշխատությունը համայ-
նական ուժերով պիտի լինի, գյուղացիք մեծ թե փոքր,
նշանակված որը պիտի աշխատելու դուրս գան իրենց
հետ ճարի համար պահանջված հացի քանակը վերցրած:

Պետությունը լայն աջակցություն է ցույց տալիս,
ձրիաբար ճար է բաց թողնում և գործին հմուտ ղեկա-
վարներ, գյուղատնտեսներ, վերահսկիչներ ուղարկում
գյուղացուն ոգնելու համար:

14965-15356

Ա 2349



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003102

A $\frac{11}{23729}$

054.

ԳԻՆԸ 10 Կ. ՉԵՐԿ.